

Թէպէտ գարալագեաղի հայերը աւանդութեամբ անուանում են դորան Սմբատաց Էւրու, բայց ես չգիտեմ թէ ի՞նչ հիմք ունի այդ աւանդութիւնը և ո՞վ է Սմբատը:

Զննեցէք Օրբելեանի պատմութիւնը, որ շատ անգամ խօսելով այդ բերդի շրջապատ տեղերի վերայ, այն է Ոստինկի, Արտաբոյնքի, Յախազօսարի և Եղեգնիսի վերայ և այդ շրջանակի կենդրօնում կանգնած ամուռ բերդի մասին ամենեին ոչինչ չէ յիշում: Ի՞նչ է պատճառը: Պատճառը այն է, իմ կարծիքով, որ այդ հոյակապ բերդը պէտքէ շինուած լինէր Օրբելեանի մահից՝ 1303 թուականից յետոյ: Ես երեակայել անգամ դժուարանում եմ, որ Օրբելեանը կարողանար զանց առնել այդ հսկայ, իւր ժամանակ անմատչելի ամրոցը, եթէ նա կառուցուած լինէր նորա օրով:

Եւ այսպէս թէ ո՞վ է ընտրել այդ խրոխտ տեղը, ո՞վ է հիմնել բերդը և ե՞րբ, ի՞նչ չար ու բարի է անցել նորա գլխով, ի՞նչ անուն է կրել և այն, ես այդ չգիտեմ:

ԳԱԶԲԵՐՈՒՆԻ.

ԵՐԵՔ ԾԱՇԿԱԳՐԵԱԼ ՆՈՐ ՆԱՄԱԿ

Մեր գիւտի դէմ՝ յարուցուած վէճերն այն մեծ օգուտն ունեցան, որ ծանօթացրին մեզ մի շարք նոր փաստերի հետ, որոնց մի մասը թէւ ինքն ըստ ինքեան հերքւում էր Ճիշտ քննադատութեամբ, բայց հիմքը՝ այն կէտը որ վերաբերում էր Հ. Ա. յվաղեանի առաջին գիւտին, մնում էր առկախ, առանց դրական ապացուցի, մանաւանդ որ իբրև հերքողական կային նամակներ, որ Հանգուցեալը չէր կարդացել, չկարողանալով կամ աւելացնենք, չկամենալով:

Այս իսկ պատճառաւ մենք դգուշացել էինք վերջնական վըճիու տալուց այն մասին թէ արդեօք Հանգուցեալը մեզնից առաջ կարդացել էր թէ ոչ որ և է ծածկագիր նամակ:

Այժմ անակնկալ կերպով պսակւում են մեր խուզարկութիւնները, և չսպասուած տեղից գուրս են գալիս հաւաստիք գրապէս ապացուցանող, որ Հանգուցեալ Այվաղեան գտել է մեր կարդացած ծածկագրերի բանալին, մեզանից շատ առաջ, 1862 ին, և այս այնչափ աւելի դուրեկան է մեզ խոստովանել,

որչափ որ մենք համոզուած էինք հակառակին, Հարկաւ ով որ երկար ժամեր զոհում՝ է այսպիսի փոքրիկ բայց հետաքրքրական խուզարկութեանց, նա ընդունակ պէտք է լինի գնահատել նոյն ուղղութեամբ և ուրիշ աշխատանքը, մանաւանդ որ սորանով մենք ոչ միայն ծածկագրերի գիւտն արած եղանք այլ և Հանգ. Այլազեանի աշխատութեան գիւտը ձիշտ է՝ մի քանիսին յայտնի է եղել դա, բայց բոլոր պատրագաները ցոյց են տալիս որ անհրաժեշտ կորչելու էր այդ, եթէ մեր գիւտը չհրատարակուէր և առաջնութեան վէճ չծագէր:

Նտապենք ասել որ այս նոր լոյսը գալիս է մեզ Շամախուց: Այնտեղի Սրբազն Առաջնորդը կարդալով մեր յօդուածները ուղարկել է Յ կտոր ծածկագիր նամակ, որոնցից մէկի ամբողջ վերծանութիւնը գրուած Հ. Այլազեանի ձեռքով, և մի այբբեն նոյն գրութեամբ: Կարդացուած նամակն է Պ. Զարմայր Մսերեանցի յիշած՝ 1862 թուինը: Այբբենն էլ կազմուած է այդ նամակի վրայ, որ երեսում է ոչ միայն գրչութեան ձեկց և 6 գրի բաւական մեծ տարբերութիւնից, համեմատած մեր այբբենին, այլ և նորանից, որ ինչ գիր որ չկայ նամակում, նոյնը պակասում է և այբբենի մէջ: Խսկ չվերծանուած երկու մեծ նամակները գրուած են մեզ արդէն ծանօթ գրչութեամբ, գիւտարընթեռնելի և սխալաշատ, ինչպէս էր Ուէթէոսի արդէն հրատարակուած և առաջին նամակը:

Այսպիսով հաստատումէ Հ. Այլազեանի 1862-ի գիւտը և մնումէ բացատրել թէ նա ինչի՞ն չէր կարդում Գեր. Թադէոս Սրբազնի նամակները: Այդ բանի բացատրութիւնը գտնում ենք նոր - Դարին Երեանից գրուած մի լրի մէջ, որ հետեւեալն է. Երբ 1867 թուականի վերջերում Տէր - Ստեփաննոսեան Գրիգոր վարդապետը Քիշնեկց գալիս էր Էջմիածին, Թէոդոսիայում Այլազեան Սրբազնը նրան երկու շաբաթ պահում է իւր մօտ և միշտ խօսակցում նրա հետ: Օրերի մէկում վարդապետը տեսնում է Սրբազնի գրասեղանի վրայ գրած չորս հատ սոսուար տետրակներ. (!?) և հարցնում դրանց մասին: Հանգ. Այլազ. Եպիսկոպոսը պատասխանումէ, թէ՝ Դաւիթ (?!) և Դանիէլ Կաթողիկոսի ծածկագիր նամակներն են, որոնք Վեհափառը յանձնել է այդ Քաղաքնիւր գոնել և աւանցնապէս էրէն յանյնէլ. (Նոր Դար Համ. 55): Այս պատուէրը թերես բացա-

տրէ թէ ինչի Հ. Այլազեան մերժում էր Թաղ. Սրբազնի մօտ գտնուած նամակներն ընթեռնուլ, որ և տեղիք էր տալիս ինձ, և իրաւամբ, կասկածելու նորա արած գիւտին:

Իմ խուզարկութիւններո ունեցան և մի ուրիշ հետեւանք: Հանգուցեալ Այլազեանի անձնական նամակների պատճէնները ձեռք բերելով, հանդիպեցայ այնտեղ մի նամակի գրուած Պ. Զ. Մաերեանցին, որից երեսումէ որ «Կաթողիկոսաց պատմութեան, մէջ եղած ծանօթութիւնը ծածկագրերի մասին իրան Այլազեանի գրածն է ամբողջապէս և Պ. Զարմայրից խնդրած, որ նա իւր անուամբ հրատարակէ: Խորանով հաստատում է որ Հ. Այլազ. անսալով երջանկ. Գէորգ Դ. ի պատուէրին չէր կարող ինքը հրատարակել իւր գիւտը, որի և գալտնիքը սրբութեամբ պահպանել էր. միւս կողմից այդ ծանօթութեամբ ակնարկում էր որ մնացած ծածկագրերն էլ իրեն յանձնուին վերծանութեան: «Յանկալի է ապաքէն, զի և մնացեալ թերթք այնպիսիք ոչ միայն անկորուստ պահեսցին, այլ և առաջարկեցին նմին իսկ Գաբրիէլ Սրբազ. Արքեպիսկոպոսի ի պարզագրն, զի չիք երկրայութիւն՝ թէ ոչ սակաւ լոյս ծագեսցի ի նոցանէ սրոց կամիցինն աշխատասիրել զնշգրիտ պատմութիւն ժամանակացն այնոցիկ»: Այս նամակը (որ գարձաւ ծանօթութիւն) գրուած է 1875 յունուարի 13-ին որից և պէտք է հետեւցնել, որ մինչեւ այդ թիւը, բացի 1859-ի նամակից Հանգ. ի ձեռքը ուրիշ ծածկագիր չկար: Այսպիսով վերջնականապէս հերքում է Պ. Թ. Զաքարեանի արած պատմութիւնը 1866—69 թուերի մասին: Այս նամակի ծանօթութեամբ յայտնուում է նաև առաջին գիւտի ճշգրիտ պատմութիւնը և դժուարութիւնները:

Այդ առաջին կարդացուած նամակը այն կապոյտ գծուածն է որ 76 կամ 77-ին տեսել է Պ. Թ. Զաքարեան և որի մասին մենք շատ յաջող կերպով գուշակել էինք որ այդ 1859ի նամակը պէտք է լինի, որովհետեւ բնականարար այն նամակն է գըծգըծուում, որի վերայ մարդ աշխատումէ առաջին անգամ: «Այդ կապոյտ տողուած նամակը կարելի է և պէտք է ենթաթագրել, որ այն առաջին օրինակն է, որ Սրբազնի ձեռքն անցաւ 1859-ին և որի վրայ աշխատելով գտաւ նա կամ ենթագրեց գտած լինիլ ծածկագրերի բանալին, (Արարատ, ապրիլ): Այս 1859-ի նամակը պարզումէ և մի խնդիր, որ անձնակա-

Նապէս ինձ համար մեծ նշանակութիւն ունի: Պ. Զաքարեան հիմնուելով իւր յիշողութեան վրայ մեղմով ակնարկում էր (insinuation) որ իմ գիւտը կարող էր գողցուն ընդօրինակութիւն լինել և իբրև փաստ բերում էր իմ և Հ. Այլազեանի իբրև թէ մի և նոյն կամ յար և նման ձեզ, խուզարկութեան սիստեմը: Եւ յառաջ եր բերում մի չարագուշակ «կամ», որի վրայ հիմնուած իբրև թէ գտել էր Հանգուցեալը իւր բանալին: Այդ բանը ես հերքեցի մանրկրկիտ քննութեամբ անցեալ ամսում, հետաքրքրուող ընթերցողը թող գիմէ այնտեղ, բայց ինչ որ իմ վերծանած երկու նամակում չէր պատահել, կարող էր մի երրորդ նամակում կատարուել: Իմ կանոններս հաւանականութեան վերայ էին հիմնուած, իսկ Պ. Զաքարեան դրապէս պնդում էր Հ. Այլազեանի արած գիւտի պատմութիւնը, իբրև ականջալուր և ականատես: Այսուամենայնիւ մենք եկել հասել էինք այսպիսի մի եղանակացութեան: «Ուստի և գալիս ենք այն հետեւանքին, որ եթէ Հ. Այլազեան գտել է մեզնից առաջ ներս. ծածկագրերի բանալին, նա այդ չէր կակարող «կամ» ով գտած լինել, այլ պէտք է ունենար՝ ուրիշ յենակէտ կամ միջոց:»

Եւ ահա արդարանումէ մեր եղանացութիւնը. 1862-ի նամակի մէջ չկայ և ոչ մի «կամ»:

Մնումէ թէ այն 10 ծածկագրերը, որ իմ կարծիքով ոչ թէ 1866-ին այլ թերեւ 76 ին կամ 77-ին անցան հանգուցեալի ձեռքը, ուր են կամ ում մօտ են գտնուում: Գեր. Մեսրոպը Սրբազնը միակ անձնաւորութիւնն է, որ կարող լինի թերեւ այդ պարզել, և մածայոյս ենք, որ նա այդ չի զանալ շուտափոյթ կատարելու:

Գանք այս երեք նոր նամակի վերծանութեան. առաջինն արել է Հ. Այլազեանն, որ ես աւելի ճշտութեան համար վերաստուգեցի, նշանակելով իմ և նորա ընթերցուածների մի քանի բաւական խոշոր տարբերութիւնները, իսկ մնացած երկու մեծ նամակն ամբողջապէս վերծանեցի ես: Հ. Այլազեանի կարդացածը անստորագիր է կամ կիսատ, իսկ վերջին երկուսը Ռէթէոսի ձեռքով են գրուած, բոլորն էլ ուղղուած ներսէտ վարդապետին: Բովանդակութեան անյարմարութեան պատճառով, այս երեք նամակի հրատարակութիւնը կյետաձգուի

անորոշ ժամանակով:

Վերջացնելով խօսքս, պարտք եմ համարում՝ հրապարակաւ շնորհակալութիւն յայտնել Պ. Նորայր Բիւզանդացուն, որ մի մասնաւոր նամակի մէջ Ստոքհոլմից չէ դանդաղել շնորհաւորութիւններ գրել մեզ, այն էլ՝ մեր արժանաւորութիւնից բարձր գովեստներով: Բազմահմուտ հեղինակը մի գեղեցիկ բացատրութիւն է տալիս առաջին ծածկագրեալ նամակի մէջ հանդիպող պատճին, որ հետեւեալն է».

«Տամ իրեն փոքրիկ տեղեկութիւն մի եւս: «Ճանճոտն մեր սուրբ աջդ համբուրէ և ասէ, մեռաք պատճիպատ տալով»: (Եր. 46) «Պատճիպատ տալ այն ժամանակուայ լեզուով նշանակում էր պատերի տակ կուչ եկած ման գալ»: (Եր. 47):

Խաչատուր Կեշառեցւոյ (ԺԴ. դար) մեծին Աղեքսանդրի ոտանաւոր պատմութեան մէջ պատճիպատ բառ մի կայ, երկու անգամ գործածուած:

«Ով վատշուէր նեգդաներոս
Որ թագաւոր իր (Էմա էիր) յեգիպտոս,
Ոչ թէ հզօրս ձեռամբ հարոս (Էմա հարուս)
Այլ լականովդ պատճիպատ»:

Եւ դարձեալ.

«Այս քեզ խրատ Ալեքսանդրոս,
Որ չըխաղաս այլ պատճիպատ,
Զձիդ կորուսեր այսօր, ավսոս,
Զքաջանց նըմանդ ահեղահրոս»:

Կայ և ի նոր Հայկաղեան բառարանին Պատճառով բառ յՈւնկեփորիկէ: «Կին չար՝ կտքաւ երկմուտ, կատուխփընկէց, աղուէս պատճիպատով»: Կը մեկնուի՝ «բառ ռամկօրէն, որպէս կեղծաւոր, խարեբայ, շողոքորթ»: Եթէ Միաբանն ապահով է պատճիպատ, նշանակութեանն, բարի է: Իսկ եթէ ապահով չէ, կըփափագիմ գիտնալ թէ պատճիպատ և պատճիպատով բառերուն վկայութեամբ կարելի՞ է ուրիշ մեկնութիւն տալ պատճիպատ պալցյ: Ինձ թուի թէ պատճիպատ և պատճիպատ խաղալու (յօւշ) վերաբերեալ բան մը կը նշանակեն»:

Գաւառացիներից արած հարցուփորձից երեւեցաւ որ «Պատճառակումէ աղուէսի այն յանկարծական ոստիւնը, որով նա խոսս է տալիս իւր ետևն ընկած շներից, անակնկալ կերպով

փոխելով իւր ընթացքի ուղղութիւնը։ Ասում են՝ աղուէսը պատուեց։ Թերեւս պոս անուամբ խաղ էլ գտնուի, ինչպէս են՝ թագրումէ արգոյ նորայր Բիւզանդացին։

ՄԻԱԲԱՆ

ԱԶԳԱՅԻՆ

**ԶԵՐԹՈՒՆԻ ՀՐԿԻՎԵԼՈՂ յանձնաժողովը ԽՆԴՐՈՒՄ է ՀՐԱՄԱ-
ՐԱԿԵԼ ՀԵՏԵԵՎԱԼՐ.**

Յայտնի է արդէն՝ որ անցեալ տարւոյ Յուլիս ամսոյ մէջ ի ԶԵՐԹՈՒ-
ՊԱՄԱՀԱՃ աղէտալի հրդեհ մը աճիւն և աւերակ դարձուցած էր գրեթէ
ամբողջ քաղաքն իւր եկեղեցիներով և վարժարաններով։

Մեր Օգոստակառ և Հայրագորով Կայսրն, ի լուր այս աղետից, թշուառ
հրկիղելոց ուտեսս և պատսպարան շնորհելու համար, հարկ եղած հրաման-
ներն բարեհաճած էր տալ, որք ամրգեցին հրկիղելոց ցոււերն և հայ աղդն
ինչպէս ամեն առմի մէջ, այս անդամ ևս առիթ ունեցաւ օրհնել իւր սի-
րեցեալ ԱԵՀԱՎՈՒԹԻՆ անուն։

Աղդային Պատրիարքարանն ալ ի գահոյից կայսերական տրուած սոյն
առաքինական օրինակին հետեւելով, փութաց կազմել զեանձնաժողովս,
պաշտօն տալով նման վերաշինել այրացաւեր եկեղեցիներն և վարժարան-
ներն։

Ուրախ եմք յայտարարել, թէ ի Ցամկաստան, ի Մանչեսթըր, ի Բարիլ
և յայլ քաղաքս գտնուած մերազնեայք փութով պատսպահանեցին մեր հրա-
ւերին և Ռուսաստանի աղդայինք ալ ըստ օրհնաձիր Կոնդակի ԱԵՀԱՎՈՒ-
ՀԱՅՐԱՎԵԹԻՆ մերսյ, իւրեանց առատ նուէլներն չզլացան մեզ։ և Ցանձնա-
ժողովս փութաց ի ԶԵՐԹՈՒՆ դրկել իբր Պատուիրակ՝ Գոյումձնեան Մեծ-
Քերովք Էֆէնտին, որ առանց որ և է փօխարինութեան, ստանձնեց սոյն
կարի ծանր պաշտօնն և նորա անձնուէր և անխոնջ ջանից շնորհիւ կարելի
եղաւ սուլ միջոցի մէջ վերաշինել։

Ա. 2որս եկեղեցիք, Ա. Լուսաւորիչ. Ա. Յովհաննէս. Ա. Սարգիս և
Ա. Աստուածածին։

Բ. Մէկ մեծ վարժարան քաղաքին կեդրոնն, հիմնայատակ եղած Ա. Յա-
կոր եկեղեցոյ գետնոյն վերայ, այնպիսի ընդարձակ, բարձր և հյոյակապ
որոյ նմանն ոչ թէ ի ԶԵՐԹՈՒՆ այլ և մօտակայ քաղաքաց մէջ իսկ չգտնուիր։

Գ. Երկու ծաղկոց Ա. Սարգսի թաղն. նմանապէս երկու ծաղկոց Ա.
Լուսաւորչայ թաղն։

Դ. Մի վարժարան Ա. Աստուածածնայ թաղն։